«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

ՈՐՈՇՈՒՄ N 1

1 նոյեմբերի 2019 թվականի

2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների և խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների և խնդիրների մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. կիսամյակի ընթացքում ռեկտորատը, ուսումնական գործընթացի կազմակերպման բաժինը, դեկանատները և ամբիոնները հետևողական աշխատանք են կատարել քննաշրջանը կազմակերպված անցկացնելու ուղղությամբ: Կիսամյակի ընթացքում համահամալսարանական հիմնական առարկաների գծով կազմակերպվել և անցկացվել են գիտելիքների համակարգչային, գրավոր թեստային և բանավոր ստուգումներ: Ստուգումները կազմակերպվել են գործող կարգի պահանջներին համապատասխան: Խախտումներ և ձախողումներ չեն արձանագրվել:

Ռեկտորատը, դեկանատները և ամբիոնները մեծ ուշադրություն են դարձրել ոչ միայն գիտելիքների ստուգման գործընթացի կազմակերպման և անցկացման, այլ նաև կիսամյակի ընթացքում ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման հարցերին:

2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանին (առանց 1-ին և 2-րդ վերահանձնումների) առկա և հեռակա ուսուցման բակալավրիատում և մագիստրատուրայում մասնակցել է 4023 ուսանող. նրանցից դրական գնահատականներ են ստացել 3005-ը կամ 74,7%-ը, ինչը 3,7%-ով պակաս է առաջին քննաշրջանի արդյունքից (78,4%): Քննաշրջանից, 1-ին և 2-րդ վերահանձնումներից հետո համալսարանից հեռացման ենթակա է 84 ուսանող (առանց առկա ուսուցման բակալավրիատի 4-րդ կուրսի մեկ անգամ ևս վերահանձնողների): Եվս 11 ուսանող ենթակա է հեռացման առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքը մարել չկարողանալու հետևանքով: 110 ուսանող առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերով դեռևս շարունակում են ուսումը: Առկա ուսուցման բակալավրիատում ուսման առաջադիմությունը կազմել է 86,9% (առաջին կիսայակում՝

83,4%), առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 90,6% (առաջին կիսամյակում՝ 89,3%), հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 55,3% (առաջին կիսամյակում՝ 65,2%) և հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 87,4% (առաջին կիսամյակում՝ 78,2%): Նախորդ տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի համեմատությամբ ուսման առաջադիմությունը առկա ուսուցման բակալավրիատում և հեռակա ուսուցման մագիստրատուրայում բարելավվել է համապատասխանաբար՝ 3,5%-ով և 9,2%-ով, առկա ուսուցման մագիստրատուրայում գրեթե չի փոխվել, իսկ հեռակա ուսուցման բակալավրիատում այն նվազել է 9,9%-ով: Առկա ուսուցման համակարգում ուսման առաջադիմությունը ըստ ուսումնառության տևողության ունի աճի միտում. որքան երկարում է ուսումնառությունը, այնքան ուսման առաջադիմությունն ավելի բարձր է: Առկա ուսուցման բակալավրիատի 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ուսման առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է 76,1%, 82,3% և 87.8%, իսկ առկա ուսուցման մագիստրատուրայի 1-ին կուրսում՝ 90,6%: Հեռակա ուսուցման համակարգում ուսումնառության տևողության և առաջադիմության միջև նման կապ առկա չէ: Բակալավրիատում, ըստ առանձին կրթական ծրագրերի, ֆինանսական, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման, ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետներում ուսման առաջադիմությունը զգալի բարձր է համալսարանի ուսանողների միջին առաջադիմության ցուցանիշից, մնացած ֆակուլտետներում այն մոտ է միջինին: Մագիստրատուրայում, ըստ առանձին կրթական ծրագրերի, ֆինանսական ֆակուլտետում ուսման առաջադիմությունը զգալի ցածր է, իսկ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետում զգալի բարձր է համալսարանի ուսանողների միջին առաջադիմության ցուցանիշից, մնացած ֆակուլտետներում այն մոտ է միջինին:

Արձանագրելով կատարված աշխատանքները, գիտական խորհուրդը, միաժամանակ, նշում է՝ դեռևս կան թերություններ և չլուծված խնդիրներ.

1. Չբավարարող մակարդակ ունի այն դասընթացների ծրագրերի կատարումը, որոնք ավարտվում են բանավոր քննությամբ:
2. Ուսանողական հարցումների արդյունքները և ուսանողների կողմից իրենց դասավանդողների մատնանշումները փաստում են, որ դեռևս առկա են միմյանց փոխարեն դասընթաց վարելու դեպքեր:
3. Թերություններ կան դասախոսների կողմից ուսանողների հաճախումների, ակտիվության գնահատման և ամփոփման աշխատանքներում:
4. Շատ դասընթացների գծով առարկայական հարցաշարերը և թեստային բազաները բարեփոխման և թարմացման կարիք ունեն:
5. Քննաշրջանից առաջ թեստային բազաների ստուգումները թերի են կատարվում կամ ձևական բնույթ են կրում:

6. Որոշ, իրարից բովանդակությամբ տարբեր դասընթացների թեստային ստուգումները կազմակերպվում են միևնույն թեստային բազաներով:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Հանձնարարել ռեկտորատին՝**

1) արձանագրված թերությունների վերացման համար մշակել որոշակի միջոցառումներ՝ նշելով պատասխանատուներին,
2) ամբողջացնել ուսումնական գործընթացի կազմակերպման և վարչարարության իրականացման կարգավորումների համակարգը՝ ապահովելով դրանց ներդաշնակությունը բակալավրական ու մագիստրոսական կրթական ծրագրերում,
3) ներդնել կրթական ծրագրերի իրականացման որակի մշտադիտարկման կառուցակարգեր,
4) նպաստել կրթական ծրագրերի կիրառական բաղադրիչի ընդլայնմանը միտված միջոցառումների իրականացմանը,
5) նպաստել համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորման բարձրացման միջոցառումների իրականացմանը,
6) ներդնել դասախոսների կողմից՝ իրենց ուսումնական բեռնվածության օրացուցային պլանով նախատեսված աշխատանքների չկատարման դեպքում աշխատանքի վարձատրության վերահաշվարկի կառուցակարգեր:

2. **Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին՝**

1) ֆակուլտետների խորհուրդների նիստերում քննարկել գիտական խորհրդի որոշումները, հետևողական լինել դրանք ժամանակին կատարելու և արձանագրված թերություններն ու բացթողումները շտկելու հարցերում,
2) դեկտեմբերի 1-ից ֆակուլտետից նշանակված պատասխանատուների և ամբիոնների դասախոսների ներգրավմամբ մեկնարկել էլեկտրոնային դեկանատի գործառույթը՝ զուգահեռաբար համակարգ մուտքագրելով 2019-2020 ուստարվա սեպտեմբերի 1-ից դասամատյաններում կատարված գրանցումները,
3) դասախոսների և ուսանողների դասաձախողումների դեպքերը քննարկել ֆակուլտետների խորհուրդների և ամբիոնների նիստերում՝ անհրա-

ժեշտության դեպքում հարցը դարձնելով նաև ռեկտորատի քննարկման առարկա,

4) դասախոսների կողմից միմյանց փոխարեն դասավանդման դեպքերը քննարկել ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդների նիստերում՝ անհրաժեշտության դեպքում հարցը դարձնելով նաև ռեկտորատի քննարկման առարկա,

5) պարբերաբար քննարկել ուսանողների բացակայությունների հարցը, մշակել միջոցառումներ դրանք նվազեցնելու ուղղությամբ:

3. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝

1) վերանայել դասընթացների հարցաշարերն ու թեստային բազաները, դրանցում բացառել երկիմաստ հարցերը: Վերանայված հարցաշարերը տրամադրել լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին համալսարանի կայքում զետեղելու համար,

2) մինչև 2019-2020 ուսումնական տարվա ավարտը համաբուհական բոլոր դասընթացները և ամբիոնների կողմից սպասարկվող կրթական ծրագրերի առնվազն 3 դասընթացի սպասարկումն ամբողջությամբ կազմակերպել Moodle համակարգով՝ այդ նպատակով ձևավորելով և համակարգ ներբեռնելով հայալեզու և օտարալեզու ուսումնառության նյութեր (ըստ դասընթացի առանձին թեմաների), սեմինար պարապմունքների, անհատական կամ խմբային աշխատանքների հանձնարարություններ, ուսանողների գիտելիքի ստուգման այլ հանձնարարություններ (իրավիճակային խնդիրներ, քեյսեր և այլն),

3) մագիստրատուրայում թույլատրել դասավանդելու միայն գիտական աստիճան (կամ գիտական կոչում) և հետազոտական ակտիվություն ցուցաբերող դասախոսներին կամ պետական և մասնավոր հատվածների կազմակերպությունների այն մասնագետներին, ովքեր տվյալ դասընթացի մասնագիտական բնագավառում ունեն առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ,

4) իրականացնել ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրենց պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման մշտադիտարկումներ, ինչպես նաև դասալսումներ՝ արդյունքները քննարկելով ամբիոնի նիստերի ընթացքում,

5) յուրաքանչյուր տարի թարմացնել դասախոսությունների հայալեզու նյութերը, ուսումնառության համար պարտադիր և երաշխավորվող գրականության հայալեզու և օտարալեզու աղբյուրների ցանկերը:

4. **Սույն որոշումը քննարկել ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդների նիստերում, մշակել միջոցառումներ ուսումնական գործընթացը բարելավելու ուղղությամբ:**

5. **Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2019 թ. նոյեմբերի 1
Երևան